ԱՐՓԻՆԵ Ռ. ԲԱԲԼՈՒՄՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.
arpinebablumyan05@gmail.com
ID 0009-0001-7840-1440
DOI:10.59523/1829-4596.2025.2(31)-81

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻՆ ՈՒ ԱՐՏԱԳԱՂԹԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (XIX դ. ՎԵՐՋ-XX դ. ՍԿԻԶԲ)*

Ամփոփում

Պատմական ժողովրդագրության ուսումնասիրությունների միջոցով հնարավոր է ոչ միայն հաշվարկել և հստակեցնել Հայոց ցեղասպանության մարդկային կորուստները, այլև բացահայտել նախացեղասպանական շրջանում օսմանյան իշխանությունների կիրառած սոցիալ-տնտեսական, ազգային, կրոնական, քաղաքական մեխանիզմների ազդեցությունը հայ բնակչության տեղաշարժերի, թվաքանակի, զուտ հայաբնակ բնակավայրերի թվի փոփոխման ու բնակավայրերի հայաթափման գործընթացի վրա: Հոդվածում անդրադարձ է կատարվում արևմտահայերի՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ դրանից դուրս տեղաշարժերի խնդրին՝ կենտրոնանալով դրանց հիմնական պատճառների վերհանման վրա: Դեպի Կ. Պոլիս, Օսմանյան կայսրության տարբեր կենտրոնական բնակավայրեր, նաև՝ դեպի Կովկաս, ԱՄՆ ու այլ երկրներ տեղաշարժերին

* *Ներկայացվել է 07.X.2025 թ., գրախոսվել է 10.X.2025 թ., ընդունվել է տպագրության 22.XII.2025 թ.:*

նպաստող հիմնական գործոնները կապված էին հայերի նկատմամբ վարվող ազգային, կրոնական և, հատկապես, ունեզրկման քաղաքականության հետ: Տեղաշարժերին ու արտագաղթին նպաստող մյուս գործոնները մահմեդական եկվորներին Արևմտյան Հայաստանում բնակեցնելու քաղաքականությունն էր, ապա արդեն՝ համիդյան կոտորածներն ու դրանց հետևանքները:

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, արտագաղթ, ներքին տեղաշարժեր, հողազրկում, կովկասյան գաղթականներ, համիդյան կոտորածներ, ժողովրդագրություն:

Ներածություն

Արևմտյան Հայաստանում մինչև XIX դ. վերջեր ընթացող գործընթացները ծանր հետևանքներ էին ունեցել հայ բնակչության թվաքանակի ու ընդհանուր կենսակերպի վրա: Այս գործընթացները հիմնականում ուղղորդվում էին իշխանությունների կողմից, իսկ դրանց իրագործման առաջնային մեխանիզմը բռնի իսլամացումն էր: Արդյունքում՝ Արևմտյան Հայաստանի տարածքի տարբեր բնակավայրերում հայ բնակչության մի մասը կրոնափոխ էր արվել, իսկ մի զգալի հատված էլ հարկադրաբար գաղթել էր այլ բնակավայրեր: Ժամանակին իսլամացված, սակայն հայկական անուններով ու ավանդույթներով գյուղեր կային Բաբերդում[1], Ակնում[2], Տիգրանակերտի տարածքում[3], Բալուի[4],

[1] **Արսլանեան.** 1955, 14:
[2] **Ճանիկեան.** 1895, 14:
[3] **Սրուանձտեանց.** 1885, 186-187:
[4] Պատմութիւն Պաղնատան. 1966, 17:

Երզնկայի գավառակներում[5] և այլ բնակավայրերում:

Իսլամացումը շարունակվեց ամբողջ XIX դ. ընթացքում և, ըստ էության, մինչև համիդյան կոտորածները, դրան այլընտրանք էր գաղթը. բնակչությունը կրոնափոխությունից խուսափելու նպատակով տեղափոխվում էր այլ տարածք: Համիդյան կոտորածների տարիներին իսլամացումը դարձավ Արևմտյան Հայաստանի հայաթափմանն ուղղված կարևոր մեխանիզմներից մեկը: Հատկանշական է, որ կոտորածներից հետո որոշ բնակավայրերում անմիջապես, իսկ որոշներում՝ ավելի ուշ, կրոնափոխ եղածների մեծամասնությունը վերադարձավ հայի ինքնությանն ու քրիստոնեությանը:

XIX դ. ընթացքում հայ բնակչության զանգվածային տեղաշարժերի կարևոր պատճառ էին նաև ռուս-թուրքական պատերազմները: Խոսքը, հատկապես, պատերազմական գոտուն մոտ ընկած և, հատկապես, մարտադաշտի վերածված Էրզրումի, Վանի նահանգների բնակավայրերի մասին է: Այսպես, ինչպես 1828-1829 թթ., այնպես էլ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմներից հետո կնքված պայմանագրերում ամփոփված առանձին կետերով արևմտահայությանը հնարավորություն էր տրվում ցանկության դեպքում հեռանալ ռուսական զորքերի հետ: Ցավոք, պատերազմների ավարտից հետո բազմաթիվ բնակավայրերում ակտիվանում էին քրդերի ավարառություններն ու տարածած սարսափները, որոնք հատկապես անտանելի էին ձմռան ամիսներին, երբ վերջիններս տեղավորվում էին հայերի շրջանում՝ հարկադրելով առանց որևէ վճարի իրենց ապահովել

[5] **Ստեփանյան.** 2005, 357:

ամեն ինչով: Թե՛ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և թե՛ դրան հաջորդած տարիներին, հատկապես Մշո շրջանը, քրդերի ու կանոնավոր զորքերի պատճառով հայտնվել էր կիսավեր վիճակում[6]: Էրզրումի նահանգի բնակավայրերից ռուս-թուրքական այս պատերազմի ընթացքում և դրան հաջորդած ամենաթողության շրջանում մեծ վնասներ կրեց հատկապես Բայազետի շրջանն ու հենց Բայազետ քաղաքը, որը, ըստ էության, ավերվել էր: Բրիտանացի աշխարհագրագետ, ճանապարհորդ Հ. Թոզերի համաձայն՝ 1880 թ. այն ուներ ընդամենը 100 տուն բնակչություն՝ գրեթե ամբողջությամբ հայ, նախկին 1000 տուն բնակչի փոխարեն[7]: Ռուս-թուրքական պատերազմի հետևանքները զգալի էին նաև պատերազմական գոտուց հեռու, մինչև Սեբաստիա ընկած տարածքներում: Այսպես, օրինակ, Կյուրինում հայերը ենթարկվում էին ամեն տեսակի հալածանքների, մինչև այն, որ հայտարարվում էր, թե նախքան ռուսների գալը պետք է հայերի վերջը տրվի: Նույնիսկ քաղաքի թուրքերը թաղերը բաժանել էին միմյանց միջև և, թաղեթաղ պտտելով, թալանում, ծեծում էին հայերին: Ամենից շատ տուժում էին քաղաքի ջորեպանները, որոնք բոլորն էլ հայ էին: Նրանց աշխատեցնում էին իբր բանակի համար՝ հաճախ հետագայում զրկելով անասուններից[8]:

Այսպիսով, մինչև 1880-ական թվականներն արևմտահայ բնակչության տեղաշարժերին նպաստող հիմնական

---

[6] **Պողոսյան.** 1985, 118:
[7] **Tozer.** 1881, 384.
[8] **Սուրենեան.** 1974, 285-286:

գործոններն իսլամացման հարկադրանքն էր, պատերազմական իրավիճակները, այդ ընթացքում և դրանց հաջորդած ավարառությունները և այլն: 1880-ականներից իրավիճակը որոշակիորեն փոփոխվում էր: Հետևաբար, մասամբ նաև փոփոխվում են կամ դառնում ավելի առաջնային ինչպես արտագաղթի պատճառները, այնպես էլ տարածքի հայաթափմանն ուղղված այլ գործընթացներ: Անդրադառնանք հայ բնակչության՝ ինչպես Արևմտյան Հայաստանի տարածքում ընթացող տեղաշարժերի, այնպես էլ երկրից դուրս՝ արտագաղթի հիմնական պատճառներին:

Սոցիալ-տնտեսական պատճառներ

Նախ անդրադառնանք տեղաշարժերի սոցիալ-տնտեսական պատճառներին, ավելի կոնկրետ՝ հայերի նկատմամբ վարվող ընդգծված սոցիալական, հարկային քաղաքականությանը, հատկապես՝ անարդարացի հողաբաժանման ու ծանր հարկահանության խնդիրներին:

Հայ գյուղացիության համար որոշ վայրերում լուրջ խնդիր էր սակավահողությունը, մյուս կողմից՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի և իշխանությունների կողմից անընդմեջ շարունակվող ունեզրկման քաղաքականությունը, ինչը մեծ ծավալներ ստացավ հատկապես 1880-ականներից[9]: Այսպես, Խարբերդի դաշտում և, մասնավորապես, Մեզրեում, որտեղից 1880-ականներին ակտիվացավ արտագաղթը դեպի ԱՄՆ, հողազուրկ էր քրիստոնյա բնակչության 81.6 %-ը, իսկ մահմեդականների՝ 23.7 %-ը, մինչդեռ նշված հարթավայրում հայերը մեծամաս-

[9] Հայ ժողովրդի պատմություն. 2010, 457:

նություն էին կազմում[10]: Սա այն դեպքում, երբ Խարբերդի դաշտի գյուղացիները համեմատաբար բարվոք կարգավիճակ ունեին մյուս՝ հատկապես Բիթլիսի, Վանի հայ գյուղացիության համեմատ: Ըստ պատմաբան, վիճակագիր Ա-Դոյի՝ Վանի, Բիթլիսի ու Էրզրումի նահանգներում մեծ չափերի էր հասել մարաբայությունը. հողազուրկ գյուղացին ստիպված էր մշակել հողեր, որոնց տերերը մեծամասամբ հարուստ ու ազդեցիկ թուրքեր էին[11]:

Հողազրկման խնդիրն աղերսվում էր հայերի նկատմամբ վարվող անարդար հարկային քաղաքականության հետ, երբ գանձվում էին անթիվ-անհամար հարկեր, որոնք տարեցտարի ավելանում էին: Այսպես, 1880 թ. յուրաքանչյուր տղամարդուց գանձվող 27 ղուրուշ կազմող զինվորական տուրքի սահմանաչափը շատ չանցած դարձավ 36, իսկ 1895 թ.՝ 50 ղուրուշ[12]: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական հարկերին, ապա դրանք գանձելիս, որպես կանոն, հաշվի չէին առնվում հողի սակավաբերրիության, ցրտահարությունների ու երաշտի հանգամանքները, որոնք հազվադեպ չէին: Հ. Թոզերը, անդրադառնալով Էրզրումի նահանգի բնակիչների տնտեսական դրությանը, նշում է, որ քանզի 1880 թ. երաշտի պատճառով բերքը գրեթե չկար, հողագործները պահեստավորել էին շատ քիչ հացահատիկ, ինչի հետևանքով ալյուրի գինը 6 անգամ թանկ էր, քան նախորդ տարի (2,5 պիաստրից աճել է 15 պիաստրի), մինչդեռ տասանորդը, հարկերն ու կառավարության պահանջները

---

[10] **Колюбакинь.** 1891, 366.
[11] **Ա-Դо.** 1912, 275-278:
[12] **Պողոսյան.** 1988, 56:

նույնն էին, ինչ բարենպաստ տարիներին[13]:

Այս բոլոր գործոնների արդյունքում, ինչպես ժամանակակիցներն են փաստում, հայ գյուղացիների մոտ 65 %-ը պարտքով էր ապրում, որն առաջանում էր, երբ գարնանը ծախսերի շրջանն էր սկսում, նաև՝ պետական հարկեր վճարելու ժամանակն էր գալիս: Այսպիսով, գյուղացին հարկադրաբար դիմում էր վաշխառուին[14], որոնք գումար էին տրամադրում առհասարակ 30 %-ով, իսկ Վանի ու Մուշի կողմերում՝ նույնիսկ 60 %-ով: Փոխարենը գյուղացու հողն ու անասունները դրվում էին գրավի տակ, և ունեզրկումը պարզապես ժամանակի հարց էր դառնում: Տարիների ընթացքում, չկարողանալով վճարել ավելի ու ավելի աճող տոկոսներով պարտքը, գյուղացին ստիպված էր լինում արդեն չնչին գումարով վաճառել ունեցվածքը: Օրինակ, երբ արտն արժեր 100 ոսկի, նման դեպքերում վաճառվում էր 10 ոսկիով[15]: Արդյունքում, ունեզրկված գյուղացիները հայտնվում էին ավելի կախյալ վիճակում, և շատերը դիմում էին գաղթի[16]: Ստացվում է, որ գաղթ ասվածն իրականում իրավիճակից բխող պարտադրված գործողություն էր, ինչ որ առումով՝ ևս բռնագաղթ: Հայերին պատկանող հողերին ու տներին, նրանց գաղթի հետևանքով, մի կողմից տիրանում էին նստակեցության ձգտող քրդերը, մյուս կողմից՝ նաև Կովկասից եկող կովկասյան լեռնականներն ու թուրքերը: Նշենք, որ այս գործընթացներում կառավարությունը ձերբազատ իրավունքներ էր բաշխել մուսուլման տարրին՝ նրա համար

[13] **Tozer**. 1881, 415.
[14] «Մուրճ». 1904, № 4, 30:
[15] **Զատիկյան.** 2013, 28:
[16] «Արաքս». 1889, № Ա, 8:

ստեղծելով թե՛ իրավական, և թե՛ բռնության հնարավորություններ:

Նշված գործընթացները վերաբերում էին ոչ միայն գյուղացիությանը, այլև առևտրականներին, քանի որ առևտրի ընդհանուր անկման հետ մեկտեղ վերջիններս ևս զրկվում էին միջոցներից ու հարկադրաբար գաղթում: Այսպիսով, նշված թեկուզ հարկադրական տեղաշարժերը կարևոր դեր էին խաղում որպես տնտեսական կարգավորիչ: Սա առավել ակնհայտ դարձավ, երբ կառավարությունը սահմանափակումներ մտցրեց միգրացիայի վրա և տնտեսական ճգնաժամն էլ ավելի սրվեց, ինչն առավել սուր զգացին այն հայերը, ովքեր մնացել էին իրենց բնակավայրերում[17]:

Մահմեդական եկվորների բնակեցումն Արևմտյան Հայաստանում և բռնությունները հայ բնակչության նկատմամբ

Արևմտահայության տնտեսական վատթար վիճակն ավելի օրհասական էր դարձել իշխանությունների թողտվության ու, ինչու չէ, խրախուսմամբ իրականացվող քրդերի, այլ՝ այդ թվում եկվոր մահմեդականների ավազակային հարձակումների հետևանքով: Քրդերի՝ կոտորածով ու կողոպուտով ուղեկցվող ավազակային հարձակումներից առավել տուժում էին Վանի, Մուշի ու Տիգրանակերտի կողմերում բնակվող հայերը[18]: Էրզրումում ևս բազմաթիվ էին գյուղացիության վրա քրդերի հարձակումների դեպքերը, և

---

[17] **Greenshields.** 2025, 37.

[18] **Սարգսեանց.** 1890, 84:

նույնիսկ մուսուլմանները, ինչպես, օրինակ, Փասինի Հասան Կալա բնակավայրում, դիմում էին կառավարությանը՝ պաշտպանության համար: Ճիշտ է, տուժողները չէին համարձակվում հարձակվողներին կոչել որպես քրդեր, այլ նրանց ներկայացնում էին որպես ավազակախմբեր: Հայտնի էր, որ դրանք ղեկավարում էին Համիդիե գնդերի սպաները, իսկ ժողովուրդն իրենց գլխարկների վրա ամրացված նշանների պատճառով նրանց անվանում էր տենեկելի: Վախեցած պաշտոնյաները, որոնք պարտավոր էին հայտնել նման դեպքերի մասին, օգտագործում էին «ավազակներ, քողարկված զինվորներ» արտահայտությունները[19]: Այնուամենայնիվ, ի տարբերություն Վանի ու Մուշի հայ գյուղացիների, հատկապես Բասենի և, առհասարակ, Կարինի շրջանի հայ գյուղացիները համեմատաբար ավելի անվտանգ ու տնտեսական առումով առավել լավ վիճակում էին, թեև այստեղ ևս հարստահարությունների դեպքերը տարածված էին[20]:

Քրդերի ավարառությունից տուժում էին նաև երկրի ավելի կենտրոնական նահանգների բնակիչները: Այսպես, Չմշկածագից 1891 թ. գրված մի նամակում ասվում է. «Չկայ գիւղ մը որ այս տարի հարիւրներով ու հազարներու քէսամ (քրդերու տրուած տուրքին այսպէս կըսեն) տուած չլինի Քրդաց: Ատու ալ գոհ չլինելով, Քրդեր սկսան յայտնի կամ գաղտնի գրաւել գիւղերու եզներն ու գառներն, ձիերն և ջորիներն, ցանելու սերմն ու խոփն»[21]:

---

[19] **Lynch.** 1901, 219.
[20] **Սարգսեանց.** 1890, 70-71:
[21] «Հայք». 1892, թիւ 24, 189:

Քրդերի ավարառությունից ու ավազակային հարձակումներից բացի, արևմտահայության համար իսկական չարիք դարձան մահմեդական գաղթականները: Արևմտյան Հայաստանի ժողովրդագրությանը բնորոշ՝ մահմեդական գաղթականների այս տարածքներում բնակեցնելու միտումը արձանագրվեց դեռևս 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ և առավել ակտիվացավ արդեն պատերազմից հետո, երբ Հյուսիսային Կովկասից կազմակերպվեց մահմեդականների ներգաղթ: Լեռնականների մի մասը սահմանն անցավ գրեթե կովկասյան բանակի հետ միաժամանակ: Նրանց՝ Օսմանյան կայսրության տարածք տեղափոխվելու պատճառներից ռուս զորահրամանատար Ֆ. Գրյազնովը համարում է հավատակից Թուրքիային կարեկցելը, հատկապես, որ նրանց շրջանում իրականացվում էր հատուկ քարոզչություն, և մեծ խոստումներ էին տրվում չքավոր, նախկին բնակավայրում չնչին ունեցվածքը թողած այս գաղթականներին[22]: Էրզրումի նահանգապետը 1879 թ. հոկտեմբերին հայտնում է, որ Կարսի, Արդահանի ու Կաղզվանի շրջաններից սպասվում է 50-60 հազար շունչ կազմող 10.000 ընտանիքների գաղթ[23]: Ընդ որում, միայն 1880 թ. տվյալներով Կարսից արդեն գաղթել էր 41.691 մահմեդական, իսկ Հյուսիսային Կովկասից՝ 25.000 չերքեզ[24]:

Հ. Լինչը հիշատակում է Զըլդըրի կողմերից եկած և Բայազետի Թութախ բնակավայրում հաստատված 100 տուն հաշվվող մեծամասամբ կարափափախ բնակչության

---

[22] **Грязновъ**. 1897, 70.
[23] **Rolin-Jaequemyns.** 1891, 62.
[24] **Զատիկյան.** 2013, 38:

մասին: Կազայի տարածքում նրանց ընդհանուր թիվն ըստ Լինչի հասնում էր 400 տան կամ մոտ 3000 շնչի: Կարափափխները զբաղմունքով հողագործ էին, բայց, ըստ Լինչի՝ հոգեկերտվածքով՝ ավազակներ, որոնք հայտնվել էին չափազանց բարեկեցիկ վիճակում: Ընդ որում, նրանք տեղափոխվել էին Արևմտյան Հայաստան՝ դժգոհ լինելով ռուսական կառավարությունից, որը հողերի հարցում նրանց չէր բավարարել: Սուլթանն էլ նրանց տեղավորել էր բերրի տարածքներում և ակնհայտ էր, որ այս ցեղախումբը հարում էր իշխանություններին[25]: Լինչը ավելացնում է, որ ճանապարհին հանդիպում էին նաև թուրքերի, որոնք գալիս էին Կարսի նահանգից՝ իրենց հետ բերելով ունեցածը: Նրանք ասում էին, որ ռուսական կառավարությունը շատ վատ է վարվել իրենց հետ, ուստի որոշել են տեղափոխվել սուլթանի իշխանության տակ: Ճանապարհին նրանց թալանել էին քրդերը՝ թողնելով կիսամերկ[26]: Երզնկայի տարածքում ևս հաստատվել էին Կարսի կողմից եկած թուրքեր[27]: Աղբյուրները հիշատակում են նաև Լազիստանից եկող մուսուլման գաղթականների մասին, որոնց պատճառով Բաբերդից Տրապիզոն տանող ճանապարհները դարձել էին անապահով[28]:

Ժամանակի ընթացքում կովկասյան լեռնականների՝ չեչենների, օսերի և ուրիշների գյուղեր հիմնվեցին Մանազկերտում, Բուլանըխում, Ախլաթում, Բիթլիսի ու Վանի նահանգների այլ շրջաններում: Կային բնակավայրեր, որտեղ գաղթական չերքեզների համար տեղի ժողովրդից հանգա-

---

[25] **Lynch.** 1901,14.
[26] **Lynch.** 1901, 19-20.
[27] **Սիրմէնեան.** 1947, 193:
[28] **Tozer.** 1881, 427.

նակություն էր արվում, ինչպես Ամասիայի գավառի Վեզիր Քյոփրյու բնակավայրում: Այստեղ չերքեզներն «իրենց տրուելիք թոշակը» մի փոքր ուշացնելու դեպքում խուժում էին կառավարության շենք[29]:

Բնակեցվելով Արևմտյան Հայաստանի հայաշատ, հաճախ ամենաբերրի բնակավայրերում՝ մահմեդական եկվորները հաճախ հափշտակում էին հայերի ունեցվածքը, տիրում նրանց գույքին ու հողատարածքներին, դիմում ավազակային հարձակումների: Հայ բնակչությունը սկզբնական շրջանում փորձում էր բողոքել մահմեդական գաղթականների ավազակությունների ու հալածանքների դեմ, ինչպես եղավ Կյուրինում, սակայն գյուղացիների բողոքներին Սվազի նահանգապետը պատասխանել էր, որ չի կարող զսպել չերքեզներին[30]:

Պատահական չէ, որ մահմեդական եկվորների հաստատվելուց հետո մինչ այդ հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր հայաթափվեցին: Օրինակ, Խնուսի Սոկյութլի գյուղի հայ բնակչությունը ստիպված հեռացավ, երբ 1885 թ. քրդերը բռնությամբ տիրացան այդ բնակավայրին[31]: Նման մի օրինակ էլ Ա-Դոն ներկայացնում է Բիթլիսի Բուլանըղ գավառակի բնակավայրերից: Խոսքը Լաթար գյուղի մասին է, որը, ըստ Ա-Դոյի 20-30 տարի առաջ ուներ 300 տուն հայություն և զուտ հայաբնակ էր, մինչդեռ 1909 թ. դրությամբ այստեղ մնացել էին 100 տուն հայեր: Բանն այն է, որ Բիթլիսից եկած մի քանի շեյխեր, տիրանալով հայերի հողերին,

---

[29] **Սիմոնեան.** 1966, 455-456:
[30] Պատմագիրք Կյուրինի. 1974, 410:
[31] **Մելիքեան.** 1964, 89:

նրանց հալածելով ու հարկադրելով հեռանալ բնակավայրից, այստեղ աստիճանաբար վերաբնակեցնում են քրդերի: Նրանց թիվը նշված ժամանակաշրջանում արդեն հասնում էր 240 տան[32]:

Խնուսի Լաքպուտաղ գյուղը հայաբնակ էր մինչև 1903 թ., երբ չերքեզներ եկան ու բռնությամբ հաստատվեցին այս գյուղում: Հայերը թողեցին իրենց բնակավայրը: Նրանց մի մասը հաստատվեց հայաբնակ այլ բնակավայրերում, իսկ մեծամասնությունը գաղթեց Կովկաս: Վերջիններս 1908 թ. հետ վերադարձան, սակայն չկարողացան չերքեզներից հետ վերցնել իրենց կալվածքները: Չերքեզներն այստեղ սկսել էին քարաշեն ու երկհարկանի տներ կառուցել, որոնց պատերը սպիտակեցնում էին տարին երկու անգամ[33]:

Նմանատիպ իրավիճակ ստեղծվել էր 1893 թ. Ալաշկերտում, ինչի մասին տեղեկանում ենք «Արարատ» ամսագրի մի հրապարակումից: Թուրքական իշխանությունների կողմից այստեղ բնակեցված մոտ 500 տուն ռուսահպատակ քրդեր բռնի ուժով խլում էին հայերի հողերը, իրենց անասուններին արածեցնում չհասած ցանքսերում: Այստեղ սովորական էին դարձել նաև կանանց ու աղջիկների բռնաբարության և առևանգության դեպքերը: Եկվորները խլել էին Համատ և Խաչլու գյուղերը՝ մասամբ արտաքսելով նաև մյուս գյուղերի քրիստոնյա բնակիչներին, որոնք հարկադրաբար գաղթում էին Ռուսաստան: Մյուսներն էլ սպասում էին հունձքն անեն ու աշնանը ևս գաղթեն[34]:

---

[32] **Ա-Դօ.** 1912, 145:
[33] **Մելիքեան.** 1964, 55-56:
[34] «Արարատ». 1893, թիւ Զ, 579:

Նշենք, որ մահմեդական գաղթականներին Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերում վերաբնակեցնելու գրեթե բոլոր դեպքերն ավարտվում էին հաջողությամբ և հայ բնակչության զրկանքներով ու գաղթով: Այս առումով, թերևս, բացառիկ է Հարամիկ գյուղի դեպքը: Այսպես, երբ 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների հետևանքով Արևմտյան Հայաստան գաղթած թաթար-մուհաճիրների 30 տուն հաստատվեց այստեղ, նրանք գաղտնի կամ հայտնի որոշ միջոցներով 1908 թ. վտարվեցին գյուղից[35]:

Այսպիսով, Հյուսիսային Կովկասից տեղափոխված մահմեդականների բնակեցումն Արևմտյան Հայաստանի նահանգներում, նաև նրանց ու քրդերի ավազակային հարձակումները մեծապես ազդում էին տարածքի ժողովրդագրական պատկերի վրա: Ակնհայտ էր, որ հայաբնակ բնակավայրերում մահմեդական եկվորների բնակեցումն Արևմտյան Հայաստանի հայաթափմանն ուղղված քաղաքականության անմիջական շարունակությունն էր, ինչը լուրջ հետևանքներ ունեցավ հայության թե՛ ներքին տեղաշարժերի և թե՛ արտագաղթի դինամիկայի վրա:

Համիդյան կոտորածները որպես արտագաղթի ու ներքին տեղաշարժերի պատճառ

1894-1896 թթ. կոտորածներից, նաև այս տարիներին պարտադրվող բռնի կրոնափոխության քաղաքականությունից գրեթե բոլոր նահանգների հայ բնակչությունը մեծապես տուժեց: Մասնավորապես, կրոնափոխության դեպքերը զանգվածային բնույթ կրեցին Խարբերդի, Դիարբեքիրի,

---

[35] **Մելիքեան.** 1964, 65:

Բիթլիսի, նաև մյուս նահանգներում: Միայն Խարբերդի նահանգում զանգվածային կոտորածների զոհ դարձավ շուրջ 40000 հայ, բռնությամբ կրոնափոխ արվեց շուրջ 15000-ը: Բարեբախտաբար, համիդյան կոտորածների տարիներին իսլամացած հայերի մեծամասնությունը հետագա տարիներին վերադարձավ քրիստոնեությանը, և միայն մի մասը համալրեց նախկինում իսլամացած հայերի շարքերը[36]: Գրեթե նույնքան սպանվածներ ու բռնությամբ կրոնափոխ արվածներ կային նաև Դիարբեքիրի նահանգում: Բացի այդ, կոտորածների հետևանքով նահանգում հաշվվում էին մի քանի տասնյակ հազար կարիքավորներ: Բնական է, որ կոտորածներին զուգահեռ, որպես միակ փրկության ճանապարհ, դիտարկվում էր արտագաղթը: Ավելին, ականատես միսիոներները նշում էին, որ «Դիարբեքիրի ամբողջ բնակչությունը կարտագաղթի, եթե հնարավոր լինի, հակառակ դեպքում, նրանք հաջորդ ձմեռ կմահանան սովից»[37]:

Վանի նահանգում զոհերի թվաքանակը տատանվում էր 20000-30000-ի միջև, կրոնափոխ արված հայերի թիվը 30000 էր[38]: Կորուստները մեծաթիվ էին նաև Էրզրումի ու Սեբաստիայի նահանգներում: Գրեթե բոլոր նահանգներում կոտորածների ընթացքում և դրանցից հետո արձանագրվեցին հայ բնակչության որոշակի տեղաշարժեր: Կոտորածների ընթացքում բազմաթիվ էին փոքրաթիվ, հիմնականում գյուղական բնակավայրերից մոտակա ավելի հայաշատ բնակավայրում ապաստան գտնելու դեպքերը, ընդ որում,

---

[36] **Բաբլումյան.** 2014, 37:
[37] **Harris.** 1897, 102.
[38] «Արարատ». 1896, թիւ ԺԲ, 581:

կոտորածներից փրկվողները ծննդավայր վերադարձան որոշ ժամանակ՝ երբեմն մի քանի տարի անց: Մի շարք, հատկապես փոքրաթիվ հայություն ունեցող բնակավայրեր, այս տեղաշարժերի ընթացքում հայաթափվեցին, մյուսների հայության թվաքանակն էականորեն նվազեց: Այսպես, ըստ Ա-Դոյի, Արճեշի գավառակի Գանձակ գյուղի 42 տուն հայությունից 40-ը գաղթեց, 40 տուն հայ բնակիչ ունեցող Ծայծակ գյուղից գաղթեց 37-ը, 60 տուն ունեցող Ջուղդեաի գյուղից գաղթեց 56-ը, 130 տուն բնակիչ ունեցող Աղորաֆ գյուղից մնաց 20-ը, 43 տուն բնակիչ ունեցող Արմիզոն գյուղից չմնաց ոչ մի տուն[39]: Հայաթափվեց Խնուսի Հայկ գյուղը, որի 50 տուն հայերը գաղթեցին կոտորածների ընթացքում[40]: Չմշկածագի Միատուն գյուղի 80 տուն հայությունը ջարդից հետո ապաստանեց քաղաքում, ուր մնաց երկու տարի, որից հետո գյուղ վերադարձան 25 տունը: Գյուղ վերադարձածների մի մասն էլ գաղթեց 1898 թ.: Դրանից հետո Միատունում մնաց 12 տուն հայություն: Նույն վիճակն էր նաև Չմշկածագի մյուս բնակավայրերում[41]: Կոտորածների ընթացքում մեծ թվով գյուղեր հայաթափվեցին նաև Մալաթիայի գավառում[42]:

Կոտորածներն էապես նպաստեցին նաև արտագաղթի ծավալների վրա: Լ. Չորմիսյանը գրում է, որ համիդյան կոտորածներից հետո «Հայ մարդը դադրած էր այլեւս կեանքին ապահովութիւնը զգալէ: Ամէն հայ վտանգուած կը զգար

---

[39] **Ա-Դо.** 1912, 317:
[40] **Մելիքեան.** 1964, 91:
[41] **Գասպարեան.** 1969, 382:
[42] **Ալպոյաճեան.** 1961, 487:

ինքզինքը»[43]: Կարևոր է հստակեցնել, որ համիդյան կոտորածների հետևանքով առավել ակտիվացան տեղաշարժերը դեպի Արևելյան Հայաստան և Ռուսական կայսրության այլ տարածքներ: Սա տրամաբանական էր, քանի որ հատկապես Վանի, Էրզրումի ու Բիթլիսի նահանգները, սահմանակից ու մոտ լինելով Արևելյան Հայաստանին, բնակության համար դիտարկվում էին ապահով ու անվտանգ: Անցնելով սահմանը՝ հատկապես ընտանիքներով տեղափոխվող գյուղացիները հաստատվում էին գյուղերում, իսկ քաղաքաբնակ արհեստավորներն ու առևտրականները կամ՝ մենակ, կամ՝ ընտանիքիներով շարժվում էին մինչև Թիֆլիս, Բաթում, Բաքու: Ըստ աղբյուրների՝ գաղթականների մի մասն էլ շարժվեց դեպի Դերբենդ, Ղուբա, Մերձկասպյան շրջաններ, հարավային Ռուսաստան: Ոմանք էլ հասան մինչև Ֆինլանդիա: Այնուամենայնիվ, գաղթականների մեծամասնությունը հաստատվեց Երևանի, Կարսի և Սևծովյան շրջաններում[44]:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի կենտրոնական նահանգներին, ապա այստեղ ևս նկատվեց արտագաղթի ծավալների աճ, սակայն արդեն կոտորածներից հետո: Այսպես, 1891 թ. ԱՄՆ-ում հաշվվում էր մոտ 4000 հայ, որոնց մեծ մասը խարբերդցի, տիգրանակերտցի, մարզվանցի ու մալաթիացի էին: Ավելի փոքրաթիվ հայեր կային նաև Կ. Պոլսից, Նիկոմեդիայից, Կեսարիայից և այլն[45]: 1910 թ. ԱՄՆ-ում ապրում էր արդեն 26498 հայ, որոնց մեջ կրկին զգալի թիվ էին կազմում հատկապես Խարբերդից ու հարա-

---

[43] **Չորմիսեան**. 1974, 453:

[44] Братская помощь пострадавшимъ в Турціи Армянамъ. 1898, XIX.

[45] «Հայք». 1891, թիւ 14, 108:

կից տարածքներից գաղթածները[46]: Համիդյան կոտորածներից հետո մի քանի հազար հաշվվող հայ գաղթականներ հաստատվեցին նաև եվրոպական մի քանի երկրներում:

Արտագաղթը շարունակվեց նաև 1908 թ. հետո և, պատահական չէ, որ հանրության լայն շրջանակներ լուրջ մտահոգություններ էին հայտնում «հայերի խմբովին գաղթ»-ի վերաբերյալ: Ուշագրավ է, որ արդեն այս շրջանում ընդգծվում էր այն հանգամանքը, որ թուրքական իշխանություններին ձեռնտու է հայերի հեռանալը[47]:

Եզրակացություններ

1870-ականների վերջերից մինչև XX դարի սկիզբը շարունակվեց Արևմտյան Հայաստանի հայաթափման գործընթացը, որն իր բնույթով որոշակի տարբերություններ ուներ նախորդ փուլերի համեմատ: Տեղաշարժերի և հատկապես արտագաղթի սոցիալ-տնտեսական պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արևմտյան Հայաստանի տարածքում հայ բնակչության նկատմամբ իրականացվող ծանր հարկային քաղաքականությունը, գյուղացիությանը հողազրկելը և, ընդհանրապես, ունեզրկման քաղաքականությունը, հանգեցնելու էին ժողովրդագրական զգալի փոփոխությունների: Այս քաղաքականությունը տվեց որոշակի արդյունք՝ արտահայտված բնակչության տեղաշարժերով ու արտագաղթի տեմպերի աճով: Հայաթափման գործընթացը նոր թափ ստացավ մեկ այլ գործոնի ազդեցությամբ, այն է՝ Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերում Հյուսի-

---

[46] **Deranian.** 1998, 179.

[47] «Արարատ». 1907, թիւ Է-Ը, 665-666:

սային Կովկասից մահմեդական եկվորների բնակեցմամբ: 1890-ականներին իշխանությունները դիմեցին առավել արմատական միջոցի՝ զանգվածային կոտորածների քաղաքականությանը: Վերոնշյալ բոլոր գործոնները հանգեցրին արևմտահայության զանգվածային տեղաշարժերի և արտագաղթի ծավալների աճի:

Արդյունքում՝ ժամանակին հայաշատ ու երբեմնի զուտ հայաբնակ բազմաթիվ բնակավայրերի ժողովրդագրական պատկերը փոխվեց ի վնաս հայկական տարրի:

Գրականություն/References/Литература

1. **Ա-Դօ** 1912, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայէթները, Երեւան, «Կուլտուրա», 406 էջ:
   A-do 1912, The Provinces of Van, Bitlis and Erzrum, Yerevan: “Kultura”, 406 p.
2. Ազգային լուրեր 1893, «Արարատ», Վաղարշապատ, Մայր Աթոռի տպարան, թիւ Զ, էջ 579-581:
   National news 1893, “Ararat”, Vagharshapat: Printing House of the Mother See, № 6, pp. 579-581.
3. **Ալպոյաճեան Ա.** 1961, Պատմութիւն Սալաթիոյ հայոց, Պէյրութ, «Սեւան», 1536 էջ:
   Alpoyachyan A. 1961, History of the Armenians of Malatia, Beirut: “Sevan”, 1536 p.
4. **Արսլանեան Բ. քահ**. 1955, Բաբերդ եւ իր շրջանները, Փարիզ, տպ. «Արաքս», 307 էջ:
   Arslanean priest B. 1955, Baberd and its regions, Paris: “Araks” publ., 307 p.
5. **Բաբլումյան Ա.** 2014, Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչությունը համիդյան կոտորածների տարի-

ներին, «Ցեղասպանագիտական հանդես», № 2, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, էջ 32-38:
Bablumyan A. 2014, The Armenian population of Kharberd Province during the Hamidian massacres, “Journal of Genocide Studies”, № 2, Yerevan: Armenian Genocide Museum-Institute of the NAS RA, pp. 32-38.

6. **Գասպարեան Հ.** 1969, Չմշկածագ եւ իր գիւղերը, Պոստոն, «Պայքար» տպարան, 810 էջ:
Gasparyan H. 1969, Chmshkadzak and its villages, Boston: “Payqar” publ., 810 p.
7. **Գուլամիրեանց Ս.** Գաղթականութեան մասին, «Արաքս» 1889, գիրք Ա, Ս. Պետերբուրգ, էջ 1-13:
Gulamiryanc S. About migration, “Araks” 1889, № 1, St. Petersburg, pp. 1-13.
8. **Զատիկյան Հ.** 2013, Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, ՀՀ Սփյուռքի նախարարություն, 424 էջ:
Zatikyan H. 2013, Karin province in the second half of the 19th century, Yerevan: Ministry of Diaspora of the RA, 424 p.
9. Կոտորած գիւղերու եւ կրօնափոխութիւններ 1896, «Արարատ», Վաղարշապատ, Մայր Աթոռի տպարան, թիւ ԺԲ, էջ 581-585:
Massacres in villages and conversions. 1896, “Ararat” Vagharshapat: Printing House of the Mother See, № 12, pp. 581-585.
10. Հայ ժողովրդի պատմություն 2010, հ. III, գիրք առաջին, Երևան, «Զանգակ-97», 701 էջ:
The history of the Armenian people 2010, v. III, book I, Yerevan: “Zangak-97”, 701 p.

11. Հայեր Յամերիկա 1891, «Հայք», Նիւ Եորք, № 14, 108-109:
Armenians in America 1891, “Hayq”, New York, № 14, pp. 108-109.
12. **Հարութիւնեան Ս.** 1907, Հայերը գաղթում են Տաճ-կաստանից, «Արարատ», Վաղարշապատ, Մայր Աթոռի տպարան, թիւ Է-Ը, էջ 665-666:
Harutyunyan S. Armenians migrate from Tajkastan [Western Armenia], “Ararat”, 1907, Vagharshapat: Printing House of the Mother See, № 7-8, pp. 665-666.
13. **Ճանիկեան Յ.** 1895, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, տպ. «Մ. Դ. Ռօտինեանց»ի, 500, 6 էջ:
Chanikean H. 1895, Antiquities of Akn, Tiflis: “M. D. Rotineanc” publ., 500, 6 p.
14. **Մելիքեան Ե.** 1964, Հարք-Խնուս, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 564 էջ:
Melikean E. 1964, Harq-Khnus, Antelias: The Armenian Catholicosate of Cilicia Printing House, 564 p.
15. **Մինասեան Պ.** 1974, Պատմագիրք Կյուրինի, Պէյրութ, Տպ. «Սեւան», 823 էջ:
Minasean P. 1974, History book of Kyurin, Beirut: “Sevan” publ., 823 p.
16. Նամակ Չմշկածակէ, «Հայք», Նիւ Եորք, 1892, թիւ 24, էջ 189:
Letter from Chmshkadzak, “Hayq”, New York, 1892, № 24, p. 189.
17. **Չորմիսեան Լ.** 1974, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Պէյրութ, Տպ. «Սեւան», 571 էջ:
Chormisean L. 1974, Overview of a century history of

Western Armenians, Beirut, “Sevan” publ., 571 p.

18. Պատմութիւն Պաղնատան 1966, հրատ. Պաղին գիւղի վերաշինաց ուսումնասիրաց միութեան, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 300 էջ:
The history of Paghnatun 1966, Published by the Baghin Village Reconstruction Association, Boston, “Hayreniq” publ., 300 p.

19. **Պողոսյան Հ.** 1985, Սասունի պատմություն, Երևան, «Հայաստան», 360 էջ:
Poghosyan H. 1985, The history of Sasun, Yerevan: “Hayastan”, 360 p.

20. **Պողոսյան Հ.** 1988, Վասպուրականի պատմությունից. 1850-1900, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 351 էջ:
Poghosyan H. 1988, From the history of Vaspurakan: 1850-1900, Yerevan: Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 351 p.

21. **Սարգսեանց Լ.** 1890, Այց Թիւրքաց Հայաստանին, Թիֆլիս, տպ. «Մ. Դ. Ռօտինեանցի», 285 էջ:
Sargseanc L. 1890, Visit to Turkish Armenia, Tiflis, “M. D. Rotineanc” publ., 285 p.

22. **Սիւրմէնեան Գ.** 1947, Երզնկա, Գահիրէ, տպ. «Սահակ-Մեսրոպ», 509 էջ:
Syurmenean G. 1947, Erznka, Cairo: “Sahak-Mesrop” publ., 509 p.

23. **Սիմոնեան Գ.** 1966, Յուշամատեան Պոնտական Ամասիոյ, Վենետիկ, Ս. Ղազար, 1038 էջ:
Simonean G. 1966, Memory book of Pontic Amasia, Venice, St. Lazarus, 1038 p.

24. **Ստեփանյան Գ.** 2005, Երզնկա. Հնագույն դարերից

մինչև մեր օրերը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 672 էջ:

Stepanyan G. 2005, Erznka: From ancient times to the present days, Yerevan: Yerevan University Publishing House, 672 p.

25. **Սրուանձտեանց Գ.** 1885, Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ, մաս Բ, Կ. Պոլիս, Արամենա, 488 էջ:

Srvandzteanc G. 1885, Toros Aghbar, traveler of Armenia, vol. 2, Constantinople: Aramena, 488 p.

26. **Սուրենեան Ս.** 1974, Կիւրինը ինչպէս որ կար, Պատմագիրք Կյուրինի, խմբ. Պ. Մինասեան, Պէյրութ, Տպ. «Սեւան», էջ 272- 329:

Surenean S. 1974, Kyurin as it was, in History of Kyurin, edited by P. Minasean, Beirut: “Sevan” publ., pp. 272-329.

27. Վանի նահանգը ներկայումս 1904, «Մուրճ», Թիֆլիս, № 4, 25-46:

The province of Van now 1904, “Murch”, Tiflis, № 4, pp. 25-46.

28. Братская помощь пострадавшимъ в Турціи Армянамъ 1898, Москва, Типо-литографія Высочайше утвержденнаго Т-ва И. Н. Кушиеревъ и К°, 624, 180 стр.

Brother's help to Armenians in Turkey 1898, Moscow: Typo-lithography of the Highest approved Company I. N. Kushierev and Co., 624, 180 p.

29. **Грязновъ Ф.** 1897, Военный обзоръ Передового Театра въ Азіатской Турціи, Изданіе Отдѣла Генеральнаго Штаба Кавказскаго военнаго округа, часть II, С. Петербургъ, Военная Типографія, 303 стр.

Gryaznov F. 1897, Military Review of the Advanced Theater in Asian Turkey, Publication of the Office of the General Staff of the Caucasian Military District, vol. II, St. Petersburg: Military Typography, 303 p.

30. **Колюбакинь А.** 1891, Материалы Военно-Статистическаго Обозрения Азиатской Турции, томь III, часть I, Тифлись, 464 стр.
Kolyubakin A. 1891, Materials of the Military-Statistical Review of Asian Turkey, vol. III, part I, Tiflis, 464 p.
31. **Deranian H.** 1998, Worcester is America, Bennate Publishing, 222 p.
32. **Greenshields T.** 2025, The Settlement of Armenian Refugees in Syria and Lebanon: 1915-1939, Beirut, Haigazian University Press, 344 p.
33. **Harris R. and H.** 1897, Letters from the Scenes of Recent Massacres in Armenia, London, James Nisbet & Co., 254 p.
34. **Lynch H.** 1901, Armenia: Travels and Studies, vol. 2, London, Longmans, Green, and Co., 512 p.
35. **Rolin-Jaequemyns G.** 1891, Armenia, the Armenians, and the Treaties, London: John Heywood, 1, Paternoster Buildings, 104 p.
36. **Tozer Rev. H.** 1881, Turkish Armenia and Eastern Asia Minor, London, Longmans, Green, and Co., 470 p.

Арпине Р. Баблумян, *Институт истории НАН РА, к.и.н.,* **Факторы, способствовавшие внутренней миграции и эмиграции армянского населения Западной Армении (конец XIX - начало XX века)**

Резюме

Благодаря исследованиям в области исторической демографии становится возможным не только уточнить человеческие потери в результате Геноцида армян, но и проследить, как социально-экономические, национальные, религиозные и политические механизмы, применявшиеся

османскими властями в период, предшествующий геноциду, повлияли на перемещения армянского населения, его численность, изменение числа армянонаселённых пунктов и процесс их депопуляции.

В статье анализируются внутренние и внешние перемещения западных армян, особое внимание уделено выявлению их основных причин. Ключевыми факторами, побуждавших западных армян переселяться в Константинополь, другие центральные районы Османской империи, на Кавказ, в США и другие страны, были национальная, религиозная и особенно экономическая политика, направленная на лишение армян прав собственности. Немаловажную роль сыграла политика расселения мусульманских иммигрантов в Западной Армении, а также гамидовкие погромы и их последствия.

Ключевые слова: Западная Армения, эмиграция, внутренние перемещения, лишение собственности на землю, кавказские переселенцы, гамидовские погромы, демография.

Arpine R. Bablumyan, *Institute of History of the NAS RA, Ph.D in History,* **Factors Influencing Migration and Emigration of the Armenian Population in Western Armenia (Late 19th - Early 20th Century)**

Summary

Through historical demographic studies, it becomes possible not only to quantify and clarify the human losses resulting from the Armenian Genocide, but also to examine the broader impact of the socio-economic, national, religious, and political mechanisms employed by the Ottoman authorities during the pre-genocide period. These mechanisms significantly influenced the internal and external movements of the Armenian population, the demographic shifts in Armenian-populated settlements, and the broader process of

depopulation.

This article explores the internal and external movements of Western Armenians, with a particular focus on identifying the primary causes. Key factors contributing to these movements – including labor migration to Constantinople, various central regions of the Ottoman Empire, the Caucasus, the United States, and other countries – were closely linked to national, religious, and especially economic policies of dispossession targeting Armenians. Among the other factors facilitating internal movements and emigration were the
Ottoman policy of resettling Muslim immigrants in Western Armenia and, subsequently, the Hamidian massacres and their consequences.

Key words: Western Armenia, emigration, internal movements, land dispossession, Caucasian migrants, Hamidian massacres, demography.